




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3879

1572

89171

V-68

891.71-2
Մ-68

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՐԿՐԱՆԵՐԻ ՄԱՐԶԵՐ

№ 4/Ա.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՊՐԻՆՏԵՐՆ

№ 4/Ա.

Ա. ՄԻԼՆԻՆ

ԿՐԱԿԵՆՔ,
ՌԵՔԱԿՈԾԵՆՔ
ԱՍՏԾՈՒՆ...

«Ինքն» պիեսի վերադրվածք



891.71
Մ-68

ԽԻՇԼԻՍ 1923

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԻԱԾԵՔ

№ 4/Ա. ԿՈՄ-ԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 4/Ա.

891.71-
Մ-68 Ա. ՄԻԼՏԻՆ

ԿՐԱԿԵՆՔ,
ՌՄՐԱԿՈԾԵՆՔ
ԱՍՏԾՈՒՆ...

Ազիւստիւն մեկ գործողութեամբ

20 03

Փոխադրեց Ե. ԱՋՆԱԿԱՆԻՍՅԱՆ



Մ. ՄԱՅԻՍԻԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ 1923

7270.57 Գ

ՀՐԱՏԱ ԱՅՈՒԹԻՒՆ
Բ. Կ. Ե. Մ. ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԵՐԱՐԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ԹԱՄԱՐ.—Գոմսամուխատ, երիտասարդ ազջիկ, մոտ 18 տարեկան: Սրտաբաց և զգայուն:
2. ՄԻՆԱԿ.—Գոմսամուխատ, լուրջ և խոհուն, շուրջը կատարվող անցքերին նայում է լուրջ և մտածելով. մոտ 19 տարեկան:
3. ՎԱՐԴԱՆ.—Կոմսամուխատ, աշխուժ, արագ դատում է և մտածածն ի կատար ածում. մոտ 18 տարեկան:
4. ԱԼԷԿՍԱՆԴՐ.—Վարդանի եղբայրը, ուրախ, ռահոգ, թովուռն ու չարամձի. 16 տարեկան:
5. ՎԱՐԴԱՆԻ ՀԱՅՐԸ.—Դանդաղկոտ ու լուրջ մարդ, մոտ 40 տարեկան, զգուշաբար մոտենում է ումեն հարցի, քննում, դատում և վերջնական վճիռ տալիս երկար մտածելուց հետո:
6. ՎԱՐԴԱՆԻ ՏԱՏԸ.—Առույզ և շարժուն պատավ կին, չի սիրում վոչ մի նոր բան, կռվում է ամեն նորութեան դեմ: Բայցում է գաղաղանին հենված. մոտ 65 տարեկան:
7. ՊԱՌԱՎ ԿԻՆ.—Հարևանուհի, հավատում է ամեն հիմարութեան և չափազանցած պտտմում: Դանդաղաբար է, իսկ խոսակցութեան ժամին նմանվում է կռավող ագռավի:

8. ՏԵՐՏԵՐ.—Ճանցառ մորուքով մարդ է, գեր, բարձրահասակ, դատողութիւնները վերացական են, խիստ շղային. մոտ 50 տարեկան:

9. ՏԻՐԱՅՈՒ.—Խեղճ մարդ է, վախենում է մարդկանցից և սառանայից: Խուսափում է ամեն գործից, ամեն անգամ խաշակնքում է պատերը, սեղանը, մարդկանց և ինքն իրեն: Խոսում է շատ քիչ վախկոտ և քիչ հիմար, վոչ ծիծաղում է, վոչ էլ ժպտում: Ծիծաղելի է և խղճալի:

Թամարն ու Միխակը Ալեքսանդրի և Վարդանի ընկերներ են, վորոնք եկել են նրանց մոտ հիւր. բոլորը հագած են սովորական շորեր:

Բեմը ներկայացնում է մի աղքատ սենեակ: Պատի մոտ զանազան տեսակի աթոռներ: Աջ կողմը երկու պատուհան հասարակ ծածկոցներով: Ստիկ մասում մուտքի դուռ. ձախ կողմը նույնպես դուռ, վոր տանում է հարեան սենեակը: Սենեակի մեջ տեղը մի մեծ սեղան, սեղանի վրա հեշտակա իր պարագաներով: Աջ կողմը փոքրիկ սեղան, վրան դրված են մի երկու շիշ, և նախաճաշիկ: Սենեակը մաքրված է, տոնական տեսք ունի, պատերին նկարներ, և ձեռքով շինած ծաղիկներ: Վարդույրը բարձրանալիս բեմի վրա են հայրը, տատը, և հարեան պատուիւ: Հայրը նստել է սեղանի աջ կողմը՝ լրագիր է կարդում: Մեծ սեղանի մոտ նստել են պատահելը: Ճառը հաճութակի, արագ բարձրանում է, ուղղում մի վորեւէ բան, մաքրում և տոնական ձև առլիս: Վարդույրի բարձրանալուց հետո մինչև երիտասարդների երևալը, ամեն բան դանդաղկոտ է: Պատահելը խոսում են արագ և իրենց խոսակցութեան տալիս կոմիքական ձևեր: Երիտասարդները երևալուն պես՝ բեմը կենդանանում է, երիտասարդները մոցնում են ուրախութիւն, աղմուկ և քրքիշ: Նրանց ամեն մի խօսքը վերջանում է մի համապատասխանող գեղեցիկ շարժումով: Տերտերների երևալուն պես ձայները լռում են: Տեսնելով երիտասարդներին տերտերները շփոթվում են:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՐԸ, ՏԱՏԸ ԵՎ ՊԱՌԱՎ ԿԵՆԸ

ՏԱՏ.—Այ՛, քեզ լավ տան... Ա՛խ, ախ, ախ... Եւ
սա կոչվում ա Գրիգորի հարստիւն...

ՊԱՌԱՎ.—(Ձեռները կոպերիս դնելով՝ ծանր ծար-
ժում է իր գլուխն ու ավելացնում). Հա, հա:

ՏԱՏ.—Ի՞նչ էն նայում եզ մարդիկ... Էզ ուր են
գնում (Դուրս է նայում):

ՊԱՌԱՎ.—(Կռնկալով, ցածին ասում է խաղաղա-
վոր).—Սատանան բացել ա դժոխքի դուռը ու նրանց
դրա դժոխք ա տանում:

ՏԱՏ.—Էլ սրբութիւն չկա աշխարհում:

ՊԱՌԱՎ.—(Նշանակալից շեշտով).—Օրենք չկա,
սրբութիւն էլ չկա... Եանի բանը չուր հասկազ կը հա-
ցնէին: Էդպիսի բաների առաջ հեռուում էին, նայում
է՞ն հիմի...

ՏԱՏ.—Հա, հա, նայում էին:

ՊԱՌԱՎ.—Ու ԼԻԷ առաջ Երիտասարդները իրենց
հապիս պահելն վաճի փոր հիմա, բոլորը նրանց էլ
խեղդեին:

ՀԱՅՐ.—(Գլուխ քրտնալցեցնելով).—Ի՞նչ... ով, թւո՛ւմ
կը խեղդեր:

ՊԱՌԱՎ.—Հերերը, ճողները, իրենց լախտներին
կը խեղդեին:

ՀԱՅՐ.—Ինչո՞ւ համար:

ՊԱՌԱՎ.—Ահա փառաբանում եմ անաստիքները...
թեան համար:

ՀԱՅՐ.—Ի՞նչ գործ ունեն այստեղ վարդերը:

ՏԱՏ.—Վճեց թէ ինչ գործ ունեն... Ո՞վ աստի-
քում էս բանը:

ՊԱՌԱՎ.—(Զարույթով). Ո՞վ, երիտասարդութիւնը:

ՀԱՅՐ.—Բայց մի՞ կամքով է լինում այս ամենը,
մի է թույլ տալիս:

ՏԱՏ.—(Գովազանք խփում է գեթին). Դուք էք
թույլ տալիս... Դուք էք սովորեցնում նրանց:

ՊԱՌԱՎ.—Ծերունիները է՞լ չեն թողնի:

ՀԱՅՐ.—Ինչ գործ ունենք այստեղ մենք... Գրած
է սուրբ գրքում՝ առանց աստծու հրամանի մար-
դու գլխից մազ անգամ չի պակասում: Իսկ եթէ այդ
այդպէս է, նշանակում է ամեն բան աստծու կամքով
է լինում. եթէ ամեն բան նրա կամքով է լինում, նը-
շանակում է նա ինքը թույլ է տալիս. իսկ մենք նը-
րա կամքին հակառակվել չենք կարող:

ՏԱՏ.—Տեր աստված, էս հո տղաներից էլ բանն
անց ա կացրել, տեր աստված:

ՊԱՌԱՎ.—(Բարկացած). Մեզք ա, մեծ մեզք, տեր
աստված...

ՀԱՅՐ.—Ձեզ էլ ու ձեր մեղքն էլ (Վոսթի է կան-
գնում)... Ես ինչ գիտեմ: Ես վոչինչ չգիտեմ... Մեկն
այդպէս ասում, միւսն՝ այնպէս: Ո՞վ է ճիշտ խոսում
չգիտեմ... Վորին հալատամ, չգիտեմ, վորին չհալա-
տամ, չգիտեմ: Ինչ պետք է անել, էտ էլ չգիտեմ: Ես
վոչ աստված եմ, և վոչ ել զբանք իմ գործերը: Աստ-

ված ինքն է եփել այս ապուրը, թող ինքն էլ ուտի:
Իսկ ինձ դուր չի գալի նրա եփածը:

ՏԱՏ.—Չոչ մեղ հաճատա, և վոչ էլ նրանց վոր-
գի, զնա տերտերի մոտ, նաքեղ ամեն բան կը բացա-
տրի, նա աստծու փոխանորդն ա, սուրբ հոգին նրա
մեջն ա բնակվում: (Խաչակնում է):

ՀԱՅՐ.—(Բարկացած). Ես չտեսա նրանց մեջ
սուրբ հոգին: Մտալ զնա թէ չէ, սկսում է երգել,
փոփոք տուր, հալ տուր, ձու տուր, ալիւր տուր, գինի
տուր, տուր, տուր, շարունակ տուր, իսկ վորտեղից
ասում, ես զաճառական եմ, գործարանատեր եմ, ինչ է...
Եվ վերջապէս ինչո՞ւ համար պիտի տամ... Չունի թող
ինքն էլ աշխատի, չի կարելի ինչ է:

ՏԱՏ.—(Լացով). Տեր աստված, սրանք վոր հայ-
րերը լինեն, բա վորդիներն ինչ պիտի լինին...

ՊԱՌԱՎ.—Մեղք ա, մեծ մեղք: Նեոն ա ծնվել
աշխարհում...

ՀԱՅՐ.—Ո՛հ, ձեր մեղքն էլ ու ձեզ էլ (Անկում է
գլխակը՝ առագ դուռն է գնում):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՏԱՏԵ ԵՒ ՊԱՌԱՎԸ

ՏԱՏ.—(Բարկացած). Տես հա, տես... (Բարկու-
թիւնից գեթին է զաւելում ձեռնափայտը):

ՊԱՌԱՎ.—Մեղք ա տեր աստված, մեծ մեղք...

ՏԱՏ.—Աստված կը պատժի մեզ... Տեր Ներքը...

ՊԱՌԱՎ.—(Խորհրդավոր). Արգեն սկսեի ա պտու-
ձեք...

ՏԱՏ.—Սկսեի ա:

ՊԱՌԱՎ.—Հա, հա, աստծու պատիժ ա մեզ հա-
տու՞մ:

ՏԱՏ.—(Վախեցած). Ի՞նչ... Երբ... վերանգ...

ՊԱՌԱՎ.—Եանի դու չսեցի՞ր...

ՏԱՏ.—Բան չեմ լսել...

ՊԱՌԱՎ.—(Զարախնդուքեամբ). Եկեղեցուց թա-
չն ու ավետարանը գողացել են:

ՏԱՏ.—(Սարսափած). Հա, հետո...

ՊԱՌԱՎ.—Փնտրեցին ու չկարացան գտնել...

ՏԱՏ.—Տեր-աստված, տեր աստված, դու փրկիր
դու վողորմիկ:

ՊԱՌԱՎ.—Տերտերեանի տղեն շատ հիվանդացել ա:

ՏԱՏ.—Տերտերեանի տղեն... նա ի՞նչ գործ ունի
էստեղ:

ՊԱՌԱՎ.—Դու ինձ տկանջ արա... Տղեն ուռչել
սկսեց, փորը ուռավ, երա սար դարձավ...

ՏԱՏ.—Օ, տեր աստված...

ՊԱՌԱՎ.—Էլ զաւարջներ, չուր մի գոխաւորներ
կանչեցին... Համա օգնութիւն չկաւ:

ՏԱՏ.—Տեր Աստված, ինչ փորձանք ա...

ՊԱՌԱՎ.—Կանչեցին մի խմատուռն ծերունու, է-
նա աղօթել ու տակ ա, վոր պիտի տրտրվի:

ՏԱՏ.—Օ թ տեր աստված: (Ձեռներ թափ Ե գութ-
կում):

ՊԱՌԱՎ.—Ու Տերտերեանի տղեն տրտրվեց. մի-
ջիցը գուզ երկու կես եղավ:

ՏԱՏ.—Հիտա—Քրիստոս... (Խաչակնում է):

ՊԱՌԱՎ.—Տրտրվեց թէ չէ, փորից գուշս ելան
խաչն ու ավետարանը: (Խաչակնում է):

ՏԱՏԱՏ.—Ի՞նչ... Խաչն ու ավետարանը փորը վաճեց
մտան:

ՊԱՌԱՎ.—Էնա գողացել էր եկեղեցուց՝ աս-
տված նրան պատժեց... ու էտու համար բռնեց փորը
էստեղ...

ՏԱՏ.—Էա ի՞նչ ա նշանակում:

ՊԱՌԱՎ.—Աստծու պատիժն ա, աստծու պատի-
ժը, մեր մեղքերի համար:

ՏԱՏ.—Մենք բարկացրել ենք աստծուն ու նա սկը-
սել ա կրակը կրակի ետեից...

ՊԱՌԱՎ.—(Թափինալով սրբում է. աշխարհ
յաւններ). Խշիմն ա, աստծու խշիմը...

ՏԱՏ.—Իսկ ասաջ դատին ինչպե՞ս էր անցնում...
Մարդիկ ուտում էին, խմում, Է՛հ հիմի...

ՊԱՌԱՎ.—(Վալով). Աստված բարկացել ա, աշ-
խարհի չարքը շուտ ա եկել ու հիմա էլ ուրախութիւն
չկա աշխարհում:

ՏԱՏ.—Ստամանն ա հրճվում, աստծու սուրբ հա-
վատն ա կործանվում:

ՊԱՌԱՎ.—Հա, հա, կործանվում ա, ես մի էրազ
եմ տեսել. չուր հիմի, վախենում էի պատմեմ,
համա ամեն ինչ դրուստ դուս ա դալիս. իմ էրազը չի
թաքում ինձ:

ՏԱՏ.—Տեր աստված, էդ ի՞նչ էրազ ա:

ՊԱՌԱՎ.—(Ոնցումում է մեծոպի կերպարանք).
Հա, աեր աստված ինքը տվեց ինձ մի էրազ, արժանի
դարձրեց իր անարժան ծառային տեսիլքներ տեսնելու:

փողոցմած տեր, ես անարժան եմ քո էգիպտի վոդո-
մուխեանը...

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ՏԱՏԸ, ՊԱՌԱՎԸ ԵՎ ԱՆՔՈՒՄԱՆԴԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Նրազ ներս է մտնում, գլխակեր-
չի հանում). Ա՛, տատիկներս այստեղ են... Քրիստոս
հարեալ ի մեռելոց իմ սիրուններին... Ես սիրում եմ
համբուրվել գեղեցիկ և հետաքրքիր կանանց հետ
(Լայն բաց է ական, ձեռները, կարծես գրկելու համար):
ՏԱՏԸ.—Սուս, ձենդ կտրիր: (Սպառնում է գու-
վազանով):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Վախեցողի շարժումներ է ա-
նում). Ի՛նչ... Ի՛նչ ես ուզում տատի, ինչու ես բար-
կացել: Ես քեզ վորդես իսկական քրիստոնիայի, համ-
բարեկով եմ ուզում շնորհավորել դատիկը, իսկ դու ինձ
զավազանով ես պատասխանում մի լավ բան...

ՏԱՏԸ.—Ձենդ կտրիր, թող խոսենք դործի մա-
սին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Դործի մասին, ապա մի սկսեք
տեսնեմ, գուցէ ես էլ սովորեմ: (Վեցնում է արձու-
նալով է վոսները բանալով ու նետաճրճաբանք լսում):

ՏԱՏԸ.—(Պառալիկ). Դէ, սոսա մի տեսնեմ, ի՛նչ
տեսար երազում...

ՊԱՌԱՎ.—(Պատրասվելով պատմել). Երազս տե-
սա...

ԱԼԵՔՍԱՆ.—(Ինքն իրեն ծիծաղով). Երազում տե-
սալ...

ՊԱՌԱՎ.—(Մարգարեապա մտնում). Եանի թէ
փողոցով ժամ էի գնում, փողոցը լուս էր ու ձեն ծըպ-
տուն չկար... Զարմացա, եմ, էսպէս էլ բան... Նայում եմ
մի տան, տեսնում է՛նտեղ լիքը մեռելներ են, նայում եմ
միւսին, մի ուրիշի, և ամեն տեղ նույն ա: Սաստիկ վա-
խեցա... Սիրտս սկսեց թռթռալ, սպասում եմ... Նա-
յում եմ շորս կողմս տեր Հիսուս-Քրիստոս ամեն տեղ,
փողոցում, թէ տների մեջ լիքը մեռելներ են ու մեռել-
ներ, կապույտ կամ ու սարսափելի...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Վոզմր). Էլի սկսեց փչել, ա,
քեզ դործի մասին խոսել:

ՏԱՏԸ.—(Սննամբեր պառալիկ). Դէ հեռա... շա-
րունակիր... չուտ...

ՊԱՌԱՎ. Տեղս ու տեղս փետացա, ուշքս կորցրի,
կարծես աշխարհիս վերջն ա եկել: Վոսներս դեռնին են
կաշում, էլ ուժ չունեի, կանգնել եմ, ու գլուխս կա-
խել... Հանկարծ լսում ա մի մեծ վարտառուին երկնից:
Ամենայն ինչ սարսեցան և մի ձայն անալոր հնչեց.
Տես... տես... սոսաց ինձ,—իսկ ես տերեւի նման գու-
ղում եմ, շունչ կտրվում ա... Աչքերս բաց արի,
սարսափը ինձ պատեց զոգզոգում եմ ու իմ աչքերին
չեմ հալատում... (Աչքեր արքում է):

ՏԱՏԸ.—(Սննամբեր). Լսով, լսով... հետո...

ՊԱՌԱՎ.—Տեսնում եմ... Տեր-Հիսուս-Քրիստոս...
Եկեղեցին թնչկուտում ա ու պարում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Զարմացած). Թո՛ւհ, սաստմունք
սաանի: Ինչու համար էր պարում:

ՏԱՏԸ.—(Տոհացած). Օ՛ր Տեր Աստված...

ՊԱՌԱՎ.—Շարունակում եմ. բախրը պատերը շարժվում էին, գմբեթը թեքվել էր կողքի, զանգակատունը փչել էր ու զանգակները մեկ—մեկ թափվել էին գետին:

ՏԱՏԸ.—(Յնչվելով). Իսկ հեռ... հեռ ի՞նչ տեսար:

ՊԱՌԱՎ.—Ավելին չտեսա, տեր աստված, տեր աստված, անարժան ծառայիդ ավելին տեսնելու չարժանացրիր... հեռ զարթնեցի...

ՏԱՏԸ.—(Բնկնված). Իսկ ի՞նչ ա ասում, քո էդք երազը:

ՊԱՌԱՎ.—Ասածու ճամարաութիւնը:

ԱՆԵՔՍԱՆԴԻՐ.—(Վեր կենալով). Է՛հ... այդ ինչ երազ է վոր... Ես երազումս ասածուն տեսա:

ՊԱՌԱՎ.—(Ապշած ու հետաքրքիր) Սուրբ աստված, սուրբ աստված... Ի՞նչով արժանացար աստծու էդ փողորմութեանը:

ԱՆԵՔՍԱՆԴԻՐ.—Ես ինչ գիտեմ, ինչով...

ՏԱՏԸ.—Դէ մի պատմի երազդ, տեսնենք:

ԱՆԵՔՍԱՆԴԻՐ.—Տարրինակ երազ, ես նույնիսկ չգիտեմ ինչով բացատրել:

ՏԱՏԸ.—Դու մենակ պատմիր, իսկ մենք քեզ կը բացատրենք:

ՊԱՌԱՎ.—(Մարգարեական շեշտով). Երազները չիմն—էլ աստծու կողմից են դալիս... Աստված ինքն ա տալիս երազը, ու էդ պատճառով էլ երազին պետք ա հախտալ:

ԱՆԵՔՍԱՆԴԻՐ.—Երազում տեսա մի ձերուսու, վոր մի փայտէ ճիպոտ ձի արած՝ նստել էր վրան. (Սա- նում է օտից ձեռնափայտը, հասում վրան եւ ցույց

ե օտիս, անելով կոճիկալան ձեւեր) Նա մոտեցած ինձ, այդպեսի մի ձերուկ էր, կեղտոտ, մաշված շո- րերով, կարճահասակ ու ագեղ... Մոտեցավ ինձ եւ ասաց:

— Տղաներս, ես ձեզ ի՞նչ վատ բան եմ տրել, վոր դուք ինձ հանգստութիւն չեք տալիս:

— Իսկ ի՞նչ ես դու,—հարցնում եմ ձերուկին:

— Ես ձեր տեր աստվածն եմ:

— Դ՞ու, մեր տեր աստվածը... Բայց ինչու դու այդպես կեղտոտ ես ու զզվելի...

ՏԱՏԸ.—(Չայտույթով). Ձեռդ կարիք, սուս, ինչ ասեր ես փչում:

ԱՆԵՔՍԱՆԴԻՐ.—Ինչ սուտ: Ես ասում եմ այն, ինչ վոր տեսել եմ:

ՏԱՏԸ.—Ձի ուզում, թող, ես գիտեմ քո հիմար երազները, մի պատմի:

ԱՆԵՔՍԱՆԴԻՐ.—Ձեռ ուզում—մի լսի, ես ասում եմ այն, ինչ վոր տեսել եմ:

ՊԱՌԱՎ.—Թող պատմի:

ԱՆԵՔՍԱՆԴԻՐ.—Ծերունին իմ խոռքերից վիրա- վորվեց ու դեմքը թթվեցրեց:

— Ի՞նչով եմ մեղավոր, վոր դուք ինձ այդպես էք պատկերացնում:

— Ինչ ես ուզում ինձնից, ուզում ես վոր ես քեզ վարտիկս կամ շապիկս տամ, ինչ է,—հարցնում եմ.— իսկ նա ձեռք թափահարում է:

— Ինչիս են պետք քո վարտիկը կամ շապիկը, երկնքում գոյութիւն ունեն առանձին մողաններ, եւ մո- դայի համաձայն աստված վնչ վարտիկ է հանդնում, վնչ շապիկ:

— Լաւ, ապա ինչ եւ ուզում:

— Եւ ծերացել եմ, եւ կը մեռնեմ շուտով... Իսկ դուք, դուք ինձ հանգիստ չեք տալիս: Իրար հետեւից շարունակ ումրակոծում էք երկինքը, տուն ու տեղը քանդում, ձեր ուսման երկինքը զոգոցում է: Իսկ եւ անտուն, անտեղ թափառում եմ երկնքում:

— Լաւ, բայց ինչ եւ ուզում:

— Հաշտութիւն, հաշտութիւն եմ խնդրում:

— Տե՛ս հրա, թէ ինչեր է ուզում. — Եւ աստուծո՞վ բարկացա, հալածեցի բոլոր կոմսոմոլիստներին եւ ասացի, կրակենք, ումրակոծենք աստուծո՞ւ Ասացի ընկերներ, կրակեցե՛ք: Թնդաց մեր ուժեղ համազարկը, վերից հետո աստուծո՞ւ կանգնած տեղը մնաց միայն թաց գետինը:

SUSC. — (Բարկացած նարձակվում է Ալեքսանդրի վրա, խլում է ձեռնափայտը): Ա՛խ դու անաստված սին դու...

ՊԱՌԱՎ. — (Սառսափած աղսք է անում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (Վախենալով փայտից): Ի՛նչ, ի՛նչ տառի, ի՛նչ եւ կերել այստե՛ր...

SUSC. — (Վազելով հետից): Եւ քեզ Աստուծո՞ւ կրակել ցույց կտամ, շան լակոտ, հրա սպասիր...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Ի՞նչ Աստուծո՞ւց ուժեղ եւ ի՛նչ է, վոր պաշտպանում եւ նրան, եթէ նա կա, գոյութիւն ունի: Ինքն իրեն կարող է պաշտպանել:

SUSC. — Սուս, ձենդ կարիր անաստված. եւ քեզ հիմա աստված կա թէ չէ ցույց կտամ: (Վազում է Ալեքսանդրի հետից, իսկ նա օրջում է սեղանի շուրջը, պտուղներ փայտով խփում է միայն սեղանին):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Տո՛ւյց տուր տառի ջան, ցույց

տուր աստուծո՞ւ մի տեսեմ, հետաքրքարեալ է տեսնել աստուծո՞ւ:

SUSC. — (Պառավիճ): Բռնիր մի այդ շան լակոտին, օգնիր... Եւ նրան աստուծո՞ւ ծաղրել ցույց կտամ: Պառավ՞ն ուզում է օգնել փախում է Ալեքսանդրի համփան: Տասը ձեռնափայտով աշխատում է խփել Ալեքսանդրի քնիվում է, հարվածը հասնում է սրտավանդին):

ՊԱՌԱՎ. — Ու՛րի՛ք... Ի՛նչ եւ անում զոգվել եւ, ինչ ա...

SUSC. — Տե՛ր-աստված...

ՊԱՌԱՎ. — (Ուղղվելով): Տե՛ր աստվածս ի՛ր տեղը, Էդդես խփել կարելի ա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Ի՛նչու քեզ չի կարելի, իսկ ինձ կարելի է, հ՛ը...

SUSC. — (Հարձակվելով): Քեզ աճելին տ պետք, շան լակոտ: Ասա, աստված կա, թե չէ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (Թաղմկեղով սեղանի օակր): Այ՛ն կա տառի ջան, կա:

SUSC. — (Հարց-հարց ձեռնափայտ խփում է գեթին): Հետո, հետո...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (Սեղանի օակրից): Ահա նա... ինքն գաղթական, այ՛ անցած անկիւնը ե պղպեղ, խեղճ, միայն կաշին է մնացել, այն էլ անա փոշուով:

SUSC. — (Ձեռնափայտով ուզում է խփել): Ա՛խ դու անաստված, սպասիր աշխարհը քանակեմ, վոր քո է կաշին նա...



2220.57

ՏԵՍԱՐԱՆ ՋՈՐՐՈՐԴ

(Դուրս լայն բացվում է, ուրախ եւ աղմկալի ներս են
մտնում ՎԱՐԴԱՆԷ, ՄԻԽԱԵԼ, Եւ ՔԱՄԱՐԷ: Ներս մը-
նողների պատճառով քննում տեսն ինչ լսում է:

ՎԱՐԴԱՆ.—Ի՞նչ է պատահել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Դուրս է քաշում սեղանի շաղկի,
կանգնում քնկերների մոտ ու կանչում): Կրակենք, որ-
բակոճենք աստծուն... Կոմսսուղ կրակիր...

ՏԱՏ.—(Բարկացած սպառնում է ձեռնափայտով):
Նա քեզ հնդկա կրակել ցույց տամ, վոր վորքի կանդ-
նել էլա չկարահաս, սպասի դու հըն:

ՎԱՐԴԱՆ.—Ի՞նչ է, ի՞նչու ես բարկացել աստի:

ՏԱՏ.—Իսկ դու ինչ ես ուզում, կամ ի՞նչու ես
խառնվում ուրիշի գործերին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Չեղծելով նայել է բռնում երկրե-
րին, իրիւր քե կրակում է): Թախի, թախի...

ՎԱՐԴԱՆ.—Աստանուն տանի, ես մինչև հիմա չը-
հասկացա: Բանն ինչուին է, է...

ՏԱՏ.—Բոլորդ անիծածներ էք, ձեր ծնողների
զաղրը չեք ղխում, փուչ կենդանիներ: (Պառալիմ):
Գնանք ինձ մոտ, աղոթենք մեր մեղքերի համար
(Դնում են)

ՏԵՍԱՐԱՆ ՇԻՆՔԵՐՈՐԴ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՎԱՐԴԱՆ, ՄԻԽԱԵԼ Եւ ՔԱՄԱՐԷ

ՎԱՐԴԱՆ.—Գնացեք աղոթելու: Կենքում ահա
մի հիմարութիւն, վոր դուք սիրում էք:

ՄԻԽԱԵ.—(Ակեփանդրին): Ինչո՞ւ էիր բարկացել
նրանց:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ինչ անեմ, եկա տեսա, իրար ե-
րազներ են պատմում: Իսկ նրանց երազները բոլոր
էլ դեքի ու աստանաների մասին էին: Դէ իհարկեւ,
ես էլ նրանց պատմեցի մի երազ, ուրիշ ուղղութեամբ,
այսինքն ավելի զվարճալին, և պատալները զափազանով
վրաս հարձակվեցին: Ես ասացի, վոր իրենք դուք են
պաշտպանում աստծուն, վորովհետեւ աստված ինքն ի-
րեն կարող է պաշտպանել, բայց նրանք չեին ուզում
հավատալ իրենց աստծու զորութեանը, և կարծում էին
վոր աստված ասանց իրենց զափազանի չի կարող ապ-
րել, ուղեցին իրենց զափազանի զորութիւնը ինձ
ցույց տալ: Հա... հա... (Միծաղում է):

ՎԱՐԴԱՆ.—Այդ մեկը ճիշտ է: Աստված միայն
զափազանների մեջ է եղել: Զլխնին զափազանները, աս-
տվածները վաղուց մեռած կլինեին:

ՄԻԽԱԵ.—Մեր, այս բանիոր-գիւղացիական հան-
րապետութեան մեջ աստծու միակ պաշտպանները այդ
ձերունիներն են: Եթէ դուք ու այդ զվարճալի երազները
պատմեիր այնտեղ, արտասահմանում, այնտեղ քեզ քո
հանդգնութեան համար քանա կը նստեցնեին: Իսկ եթէ

այդպիսի մի երազ պատմելը սրանից մի քանի դար առաջ, քեզ մաս-մաս կաններն Փանի դեռ աստված կա, մարդիկ, հրով, սրով, մարակով, բռնութեամբ ու փայտով կաշառականն նրան: Այս բոլորը, ինչ վոր կատարվում են այստեղ ցույց են տալիս վոր աստված գոյութիւն չունի այլ մարդիկ են հանել նրան: Իսկ ես ընդհանրապես թքել եմ այդ աստծու և նման ցանցա-սութիւնների վրա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Տախտալով). Իսկ ես ուզում եմ նրանց հետ մի քիչ էլ պատերազմել...

ԹԱՄԱՐ.—Ո՞ւմ հետ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Աստվածներին... (Ընդհանուր էրբէրի):

ԹԱՄԱՐ.—Բայց դու ինչպես պիտի կռվես նրանց հետ, բանի վոր նրանք գոյութիւն չունեն:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ես ուզում եմ կռվել այն աստ-վածներին դեմ, վորոնք ապրում են մեր պատմութեան տերութիւնների, և մութը մնացած մարդկանց համար:

ԹԱՄԱՐ.—Իսկ ես խղճում եմ այդ ծերունիներին:

ՎԱՐԴԱՆ.—Խղճալ, ինչո՞ւ համար:

ԹԱՄԱՐ.—Նրանք նման են մութ հանքանոցներում աշխատող ձիերին, վորոնք շարունակ աշխատում են, իրենց ամբողջ կեանքը անց են կացնում մթութեան մեջ, խափարը կուրացնում է նրանց աչքի լույսը և երբ նրանց լույս աշխարհն են դուրս բերում, նրանք վաղ տեսնում են, վաղ էլ զգում:

ՄԻԽԱԷ.—Այդ ճիշտ է...

ԹԱՄԱՐ.—Մի մտածեցեք ընկերներ, այդ պատմութիւնների կեանքը անցել է խափարում, նրանք չեն տեսել լույս, արեւ, խափարը կուրացրել է նրանց:

եղ միթէ նրանք կարող են տեսնել այժմ ճշմարտութիւնը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Այո, կարող են:

ԹԱՄԱՐ.—Կարող են, ի՞նչպես...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Վազեւորված). Եթէ նրանք խա-փարում կուրացել են, մենք կը բանանք նրանց աչքի-քերը և կստիպենք վոր նայեն, տեսնեն ճշմարտութիւնը եթէ նրանք նայել չեն ուզում, մենք կը սովորեցնենք շոշափել, հոտ առնել, լիզել. միայն թէ տեսնել և զգալ ճշմարտութիւնը:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Մահում է եայր

ՀԱՅՐ.—(Ալեքսանդրին). Ինչո՞ւ դու ամենից շատ ես աղմկում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Վորովհետեւ ամենից շատ ես եմ ուզում աշխատել:

ՀԱՅՐ.—Եւ վոչինչ դուրս չի գալիս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Վոչինչ, մի անգամ դուրս չի գա, միւս անգամ կը հաջողվի:

ԹԱՄԱՐ.—Նա տատիկների հետ պատերազմ էր անում:

ՀԱՅՐ.—Այդ բոլորը երևի դարձեալ աստծու պատճառով:

ԹԱՄԱՐ.—Ի հարկէ...

ՀԱՅՐ.—Եւ մզ հաղթեց...

ԱԼԵԲՍԱՆԴՐ.—Եւ:

ՎԱՐԴԱՆ.—Վոչ բարեկամ, ավելի լավ է ճիշտն
ասես. եթէ մենք չլինեինք, պատահե՞րք քեզ զավա-
զանով կ'սպաննեին:

ԱԼԵԲՍԱՆԴՐ.—Վոչ, ես այդ թույլ չէի տա:

ԹԱՄԱՐ.—Լավ, բա ի՞նչ կաններ...

ԱԼԵԲՍԱՆԴՐ.—Ինչ կաններ (վոտե) կը ծկվեի...

(Ոնդհանուր ծիծաղ):

ՀԱՅՐ.—Պատաժները տոնի առթիվ, ինձ էլ ուզում
էին ուժակոծել:

ԹԱՄԱՐ.—Իսկ դուք ի՞նչ արեք:

ՀԱՅՐ.—Ինչ պիտի անեի, մի բան ասացի ու հե-
տացա: (Ներհասարակները շրջապատում են)

ԹԱՄԱՐ.—Ի՞նչ ասացիր:

ՄԻՆԱԿ.—Դուք նրանց պաշտպանեցիր թէ՛:

ՎԱՐԴԱՆ.—Վոչ, իմ հայրը նրանցից չէ:

ԱԼԵԲՍԱՆԴՐ.—Դէ ասա հայրիկ, ինչ ասիր նրանց:

ՀԱՅՐ.—Իսկույն. ես ասացի, վո՞ր աստված ինքն
է եկել այս ապուրը և թող ինքն էլ ուտի: Իսկ ես վոչ
հեղ կը նայեմ, և վոչ էլ ձեզ կը սովորեցնեմ:

ԹԱՄԱՐ.—Իսկ դուք համատեմ էք ասածուն:

ՀԱՅՐ.—Եւ... Չգիտեմ:

ՎԱՐԴԱՆ.—Դէ, ուղիղն ասա հայրիկ:

ՀԱՅՐ.—Ինչ ասեմ, չգիտեմ և ուրիշ վոչինչ:

ԹԱՄԱՐ.—Ի՞նչպես թէ...

ՀԱՅՐ.—Այնպես... Ես ասածուն չեմ տեսել, իսկ նա
ինձ երբեք չի օգնել: Շուրջս միշտ չարութիւն և անի-
րաւութիւն է եղել, բայց նա վոչ մի բանի չի խառնը-
գել: Հարուստ մարդկանց, կամ տերտերների համար

գուցէ նա կա, գոյութիւն ունի, և գուցէ աստված նը-
րանց մասին նույն իսկ մտածում էլ է, իսկ խեղճի հա-
մար նա երբեք չի մտածել: Ահա այն, ինչ վո՞ր ես եմ
մտածում:

ՄԻՆԱԿ.—(Վտռուկ եւ հաստատ). Չկա և վոչ մի
աստված: Աստված հնարել են խեղճերին սարկացնելու
համար: Աստված աշխատավորների համար մի շղթա է,
կրօնը կապանքներ, վո՞րով հարուստները շղթայել
են խեղճերին: Այդ կապանքների օգնութեամբ նրանք
պահում են իրենց խաբված ստրուկներին, ան-
հնազանդութեան համար վախեցնում դժոխքով, իսկ
խռնարհութեան համար խոստանում զրախո: Այս բո-
լորը նրանց համար էժան է և ձեռնառու: Չկա աստված,
այդ ասում է մեր անցեալը: Աստված դա մի խաբի-
բայութիւն է, մի ստրկութիւն, մի բարբարոսութիւն...
Իսկ անաստվածութիւնը՝ ազատութիւն, գեղեցկութիւն
և երջանկութիւն:

ՎԱՐԴԱՆ.—Ասածուն չեն հալատում նույն իսկ
տերտերները: Մանրիկացի եղբակողոս Բրաունը գրում
է. «Այն աստվածը, վո՞րը թույլ է տվել համաշխարհային
պատերազմը, Վերսալի դաշնադիրը, և Ռուսաստանի
նախապաշարումը նա աստված չէ, այլ աստանա է»:

ՀԱՅՐ.—Դուք այդ բոլորն ինձ ի՞նչու էք աս-
ում, ես այդ ամենը շատ լավ գիտեմ, բայց և այնպես
չեմ կարող ձեռնկերպել իմ մտքերը:

ԱԼԵԲՍԱՆԴՐ.—Ինչ կարիք ձեռնկերպելու...

Մտածիր այնպես ինչպես մենք՝ կրակիր վեր, գեպի
այդ տեղ աստվածը:

(Ինքի ետեւից ազմուկ սուլոց եւ ձայներ):

ԹԱՄԱՐ.—(Մտեցնում է պատահանին զարմացած):

Այս իսկ է, տերտերները մեր տունն են վաղում:

ՎԱՐԴԱՆ.—Տերտերները... Ի՞նչ են ուզում: Ես նորանց կվճռեմ այստեղից: (Մտածում է դռներին):

ՄԻՆԱԿ.—Սպասիր բարեկամ, այդպես արագ գործի մի անցնիր: Թույլ տուր նրանց մտնելու, իսկ մենք կը ամրակոծենք ամեն կողմից:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Այդ արդեն իմ բանն է, կրակն է այդ աստծուն... (Դուռը բացվում է, արագ ներս են մտնում տերտերը և խրատուն, վախեցած, տերտերի ձեռքին ավետարան, խրատունի ձեռքին բուրվան, բերի օսկի տերտերի օտար, մի և ձեռքին մի կողով զառկալան կարմիր ձուկ, խրատուն ցայրաբուր, և, կողովն րնկնում է վայր և միջի ձուկը բաժանում: Լուսին):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ամեն, ամեն... Զան, ջան, թափվեցեք...

ՏԵՍԱՐԱՆ ԵՈՅՆԵՐՈՐԴ

Ֆրատուն փախեցած խաչակնձում է բոլորին՝ բաժանված ձուկեր, դուռը, սննդակը, և մաքրված: Տերտեր ամուսն րնկնում է մոտիկ տրոտին:

ՎԱՐԴԱՆ.—(Մտածելով տերտերին). Ի՞նչ պատահեց: (Տերտեր հագնվել է ծնուն):

ՎԱՐԴԱՆ.—Ի՞նչ պատահեց:

ՏԵՐՏԵՐ.—(Պոստում է հագնվել). Պահպանիչ և սուրբ հոգի, օրհնեալ գտունս այս, զրնակիչս սորա...

ՏԻՐԱՅՈՒ.—Վա՛յ մեզ... Վա՛յ ժողովրդի մերո, վա՛յ ամենայնի... Վա՛յ տանս հայսմիկ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Մտածում է ձուկերին). Դէ, մուտուր... (Տրատուն խաչակնձում է նրան). Ի՞նչու համար ես խաչակնձում:

ՄԻՆԱԿ.—Բայց դուք ում տունն էք եկել:

ՏԵՐՏԵՐ.—Հանուն ձոր, և վորդվո, և հոգույն սրբո...

ՎԱՐԴԱՆ.—Պատարագն սկսվեց:

ՏԵՐՏԵՐ.—(Լալկան ձայնով). Անաստվածների խելագար ամբողջ, հարձակվեց հավատացեալ վոխարների փառախի՝ սուրբ եկեղեցու վրա, և սկսեց ամբարշտութեամբ ամենայնի ծաղրել նորան:

ՏԻՐԱՅՈՒ.—(Ձուկում լիք կողովն աօխատում է պանկանիկ Ալեքսանդրից). Կենդանիք ամենայն օղնեցեք զբարձեալն աստված... Վա՛յ մեզ... Վա՛յ ամենայնի... Վա՛յ ձուկերաց իմաց...

ՄԻՆԱԿ.—(Տերտերին). Լավ. ինչ էք ուզում մեզ սից:

ՏԵՐՏԵՐ.—Օգնութիւն...

ՎԱՐԴԱՆ.—Օգնութիւն...

ՏԵՐՏԵՐ.—Օգնութիւն, հանուն և ի սեր բարձրեալ աստծու:

ՄԻՆԱԿ.—Դուք հավատում եք աստծուն:

ՏԵՐՏԵՐ.—(Մեծ խաչակնձով). Հավատում եմ խոստովանիմ...

ՄԻՆԱԿ.—Դուք հավատում եք, վոր աստված տանն ինչ գիտէ, ամեն գործ տեսնում է, և ամեն բան ղեկավարում:

ՏԵՐՏԵՐ.—(Վախեցած). Այո, հաճաաամ, խոստովանիմ եւ զգամ:

ՄԻԽԱԿ.—Դէ տեսնում էք, եթէ դուք հաճատում էք և զգում, վոր աստված է ամեն բան կառավարում, էլ ձեր ինչին է պետք մեր օգնութիւնը:

ՏԵՐՏԵՐ.—(Մաքսաւիած). Բայց այդ, ինչպես...

ՄԻԽԱԿ.—Խնդրեցեք ասածուն, թող նա ձեզ օգնութեան ուղարկի մի վաշտ հրեշտակներ, կամ մի գունդ սրբեր վորոնք ձեզ վողջ և առողջ կը հասցնեն ձեր տունը:

ՏԵՐՏԵՐ.—(Ընկնւած). Աստված չի կատարի իմ խնդիրը:

ՄԻԽԱԿ.—Բայց ինչո՞ւ... Ձէ վոր դուք մի հասարակ, կամ աղքատ մարդ չեք: Ասածու փոխանորդն էք կեանքում, և նա առաջին հերթին ձեր պահանջն է բավարարելու:

ՏԵՐՏԵՐ.—Այո... Բայց նա այդպիսի խնդիրներ չի կատարում:

ՎԱՐԴԱՆ.—Բայց, ասացեք խնդրեմ, այլեւ ինչու՞մըն է նրա զորութիւնը:

ՄԻԽԱԿ.—Դուք Ասածու փոխանորդ էք, նրա օրհնութիւնը միշտ ձեզ հետ է: Ձեզ տրված են լայն իրավունքներ. օրինակի համար, դուք կարող էք ներել կամ ինչպես դուք էք ասում թողութիւն շնորհել ամենա ծանր հանցանքներ և ըստ ձեր հայեցողութեան խոզին կամ զրախտ և կամ գժոխք ուղարկել... Հանկարծ այսպիսի ծանր, կրիաթկական բուռն աստված ձեզ չի օգնում... Այդ ինչպես կարելի է:

ՏԵՐՏԵՐ.—(Վախի կանգնելով). Վերտեղ եմ ես... Ո՞վքեր եք դուք:

ՎԱՐԴԱՆ.—Մենք կոմսոմոլիստներ ենք... Բայց ասացեք իսկապես թէ ձվքեր էք դուք:

ՏԻՐԱՅՈՒ.—(Վախեցած նայում է եւ ձեռներով շարունակ խաչակնքում). Կոմ... կոմ...

ՏԵՐՏԵՐ.—Կոմսոմոլիստներ... (Խառն խոսքեր եւ համում, կծկվում է եւ փոքր բռնում):

ՀԱՅՐ.—Ինչ եղա՞վ...

ՏԻՐԱՅՈՒ.—Վա՛յ մեզ... Վա՛յ ամենայնի... Վա՛յ տանս հայտնի...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Հա՛վ ինչ ես կոկոսում... Բուռվարը տուր, տերտերի հոգուն խոռնկ ծխենք...

ԹԱՄԱՐ.—(Մտեցնելով տերտերին). Կարծես թէ նրա փորը ցավեց...

ՎԱՐԴԱՆ.—(Տիրացուին). Ի՞նչ է կերել նա այսօր:

ՏԻՐԱՅՈՒ.—(Խաչակնքում է վարդանին):

ՎԱՐԴԱՆ.—(Չսպված բռնում է նրա ծածուկից). Առա, ինչ էք կերել այսօր:

ՏԻՐԱՅՈՒ.—(Արտասանում է արագ, կարծես «նայ մեր» լինել). Պանիր, կարագ, ձու, կաթ, միս, երշիկ, բազի ապուխտ, հաց, խմորեղեններ, սուպ, տապակած բադ, հավ, հնգունավ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Նրա խոսելու ձևի նամայա՞վ ձգում է բուռվարը). Աշխարհը տերտերներին շատ կեր փոքրիկ ազատելու համար, զտեր աղաչեսցու՛ք:

ՏԻՐԱՅՈՒ.—(Վախեցած շարժում է գլուխը ու նայում). Տեր վճգորմեա... (Տերտերը հատալում է):

ԹԱՄԱՐ.—(Ծիծաղելով). Ահա ձեզ և պատարագը:

ՀԱՅՐ.—Տերտերը շատ է կերել... Կտրարվի... Ի՞նչ անենք:

ՎԱՐԴԱՆ.—(Ալեքսանդրին) Տառիկի դարակուս
մի մեծ շէշ լուծողական կա, բեր իսկույնս

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ես, իսկույն... (Վազում է մօտ)։

ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

— Դասն առանց Ալեքսանդրի, հենա ռասը եւ պառույթը

ԹԱՐԱՐ.—Մի՞թէ կարելի է այդքան շատ ուտել։

ՎԱՐԴԱՆ.—Աշխատել չեք սիրում, իսկ ուտելու
ընդունակ էք մինչև այս աստիճան։ (Տեսերը ծանր
հառաչում է)։

ՏԵՐՏԵՐ.—Աստված քաղեա ղիս, զմեղավորս...
Բըս... Բը՛ս... Ռո՛ճա (Ներդային կեբայով վտակերը հա-
ռակին է խփում)։

ՎԱՐԴԱՆ.—Ահա ձեզ գոյութիւն չունեցող աստծու
վողորմելի ծառան։ Նրան վաճում են տնից ինչպես մի
քոստո շան, իսկ սա աղոթում է աստծուն, օգնու-
թիւն աղերսում, հաստատ գիտենալով ժոր նա գոյու-
թիւն չունի։ (Տեսերը լացակումած հառաչում է։ Տիրա-
ջուն ռառունակ խաչակնում է ամեֆին։— Բեմի հետեւից
Ալեքսանդրի մայրը.— «Տառի շուտ արա, լուծողականը
սուր, տներտերի փորին պիտի քսենք»։ (Տառի մայրը).
«Ես քեզ լուծողական ցույց կաամ շան լակոս, հըլա
սպասիր»... Չախ կողմի դուրս արագ բացվում է, ներս
է բնկնում Ալեքսանդրը, նրա հետեւից արագ մտնում են
պառավները։ Տեսերին ահմեկով կաբգնում են... Լոու-
թին։ Տեսերը հառաչում է)։

ՏԱՏ.—(Արագ մտենալով). Ի՞նչ պատահեց տեր-
հայր։

ՊԱՌԱՎ.—(Մուկն չոնկելով). Բրիտոսս հարկավ ի
մեռելոց...

ՏԵՐՏԵՐ.—Բո՛ւ... ո՛ւ, օգնեցեք...

ՏԱՏ.—Անաստվածներ, անիծածներ. տանջել էք
սուրբ մարդուն... Անաստվածներ, նզովածներ... (Նը-
փում է փայտ գետնին)։

ՎԱՐԴԱՆ.—Լավ հերիք է... Մենք մեղավոր ենք,
վոր նա որաքվելու աստիճանի կերել է, ինչ է։

ՊԱՌԱՎ.—(Լալկան մայնով). Պաչեցեալդ աստ-
ված... Հիսուս-Բրիտոսս... Վողորմի մեղ... Սուրբ ա,
սուրբ մեր տեր հայրը։

ՀԱՅՐ.—(Միժաղելով). Օհո, նրան արդեն սրբե-
րի շորքում դրին։

ՏԵՐՏԵՐ.—Օ՛գնեցեք...

ՏԱՏ.—Ինչ անենք տեր-հայր։

ՏԵՐՏԵՐ.—Տարեք ինձ, առն տարեք...

ՊԱՌԱՎ.—(Աւխասում է բարձրացնել տեսերին)
Կանք, տեր-հայր ձեռանանք այս անաստվածներից։

ՏԵՐՏԵՐ.—Չավակներս, իմ սիրեցեալ աղջիկներս,
օգնեցեք... Ազատեցեք ինձ...

ՏԻՐԱՅՈՒ.—(Դուրս բռնելով). Այս հագուստնե-
րով չի կարելի, մեզ կը ծեծեն, արիւ շորեր հագցրեք
մեզ...

ՏԱՏ.—Ուրիշ ինչ տանք... Մեր իւրկաներն
մեզում էք։

ՏԻՐԱՅՈՒ.—Վողորմեա ինձ աստված... Տվեք...
Թող լինին։ (Տառը դուրս է գնում)։

ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Պատասխանում է սերտերի տմեկն մի օտարմանին:

ՄԻՆԱԿ.— Դէ պատրաստվեցեք տեսնելու, տեր-
տերներին սարքած նոր դիմական հանգիստը: Ապա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Հրեշտակների փոխարեն, պատավ-
ները ձեռքների վրա կը տանեն այս սրբին... Հիանալի
է, դէ տեսնենք...

ՎԱՐԴԱՆ.— Բայց ուր է լուծողականը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Տատիկը չափեց...

ՎԱՐԴԱՆ.— Ախտոս, չկարողացանք տեր-հորն այս
զատկին հիւրասիրել...

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍԵՐՐՈՐԴ

Ներս է մտնում օտար սի գիւղի կամացի օտերեւի

ՏԵՐՏԵՐ.— Օ՛, օ՛...

ՏԻՐԱՅՈՒ.— Շուտով... շուտ (խաչակնում է իւր-
կան եւ սկսում է աջագ հագնել. պատավներն ասաց
բռնում են օտերը):

ՊԱՌԱՎ.— Աստված, աստված... մինչև ուր ենք
հասնելու:

ՏԵՐՏԵՐ.— Բո՛ւ... Աստված ամենայն ինչ բաժին
է հանել ինձ, բազմամեղի...

ՊԱՌԱՎ.— (Տիրացուին) Ապրիլ...

ՏԱՏԸ.— Ինչո՞ւ...

ՊԱՌԱՎ.— Միշտ, երբ տերտերն զգեստավորվում
ա, ապրիլներ են կարգում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Սատանան տանի... Բայց նա
կնոջ իւրեղ է հագնում:

ՊԱՌԱՎ.— (Միասին). Տերտերի հաղած իւր-
կան էլ սրբանում ա:

ՏԻՐԱՅՈՒ.— (Խաչակնում է, ուղղում իւր իւրեղին
եւ ազգրում). Հրաժարիմք ի սատանայէ և ամենայն
խաբեութիւն է նորա, ի պատրանաց նորա, ի չար
զործոց նորա, ի չար գնացից նորա, ի չար կամաց
նորա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Բառում է տիրացուի իւրեղին).
Ինչ ես մըթմըթում:

ՏԻՐԱՅՈՒ.— (Աւառում է ազատել իւր իւրեղին
փեշերը եւ շուրջնակ խաչակնում է Ալեքսանդրին).
Ի չար հրեշտակաց նորա, ի չար պաշտօնից նորա, և
ամենայն չար զորութենէ նորա հրաժարելով՝ հրաժա-
րիմք... (Ալեքսանդր բաժնում է ճրան):

ԹԱՄԱՐ.— (Ալեքսանդրին) Ի՞նչ, դու ուղում ես
զրկել մեզ այս հրաշալի տեսարանից... Թող, թող
տեսնենք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Բայց նա արջի նման մըթմըթ-
ում է ջրի սակ, թող կարգա զգացված ու բարձր
ձայնով:

ՏԻՐԱՅՈՒ.— (Քիչ բարձրացնելով ձայնը եւ հասիկ)
Տեր ազատեա մեզ ամենայն չար է, փորձանք է... Հրեշ-
տակաց իւրոց պատվիրեալ է պահել զքեզ, և ամենայն
հանապարս քո, զի մի երբեք հարցես քարի զոտն

քո... փառք հոր, և վորդովո, և հոգւոյն սրբո... ամեն:
(Զգեսաժողովոմք վերջացած է: Պառավները զգուշու-
րեամբ բռնում են տետրի ձեռքը, եւ առաջ գնում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Քան... քան... մի նայեցեք է...

ՎՍՐԴԱՆ. — Եւ այց հրեշտակների փութարեն տեսեք
թէ ձեզեր են տանում... Երկու պառավներ, վորոնք
վաղուց են հորցրել իրենց բանականութիւնը (Տեսերը
նազած է կանացի շարեր գլուխը, գույնը գույնը բաշ-
կեմանով ծածկել է: Պառավները ճիշտ տեսնում են ձեռ-
ներից բռնած, սիրացուն խաչակնքում և մնացածներին.
ապա կանգնում դռանը, եւ սկսում իր սողմանքը)...

ՏԻՐԱՅՈՒ. — Ի վերա հարցես քարի զվտան քո,
կոխեսցես՝ դառի՞ն և զվիշման...

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Վայ, մուկը, մուկը... (Մտաք մտե-
նում է սիրացունին):

ՏԻՐԱՅՈՒ. — (Վախեցած վեր վեր էր շարում). Վայ...
վայ... վայ ինձ, վայ ամենայնի, վայ, տան հայրմիկ,
վայ ձուերաց խնոց... (Մտաք դուրս է քաշում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Հա... հա... (փազում է ետեւից):

ՄԻՆԱԿ. — Վաղորմելիներ, դուք գոյութիւն չունե-
ցող աստծու հիմար և վախկոտ ստրուկներ...

(Դեսից լսում է Ալեքսանդրի ձայնը). «Կրակներ,
ամբակոծենք աստծուն... Կոմսոմոլ կրակիր»... (Բեմի
ետեւից լսվում է աղմուկ սուլոց եւ ձայներ):



Տր. Կ. Ե. Մ. Անդրկովկասի երկրային կաժիտների նու-
սասրահաթիւներ լույս են տեսել

1. «Красные Востокы» № № 1, 2 և 3.
 2. «Կրակներ, Խմբակներ Աստուծոյ» (Երկր լի-
զաներով՝ հաշիւներ, ստուշեր և վրայերեն)
-

Մամուլի տակ են և շատով լույս կը տեսնեն

1. Տր. Կ. Ե. Մ. Ծրայիրը և Կանոնադրութիւնը
(հաշիւներ, վրայերեն, թուրքերեն)
2. Կարմիր Աստուծոյ ճառեր (հաշիւներ և վրա-
յերեն)

